Արձանագրություն N 2

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/66-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

«11» նոյեմբերի 2026թ.
ժ. 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Շիրազ Առաքելյանը,
Անդամներ՝ Մագդա Կարապետյանը , Լենա Միրզախանյանը,
քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյանը

1. **<u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/66-Ք** ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Ալեռտո» ՍՊԸ	ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ 374 98 28-29-38

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

2. **<u>Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին</u>**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	կրակմարիչների	754880	«Ալեռտո» ՍՊԸ	610000	732000
2	կրակմարիչների	208800	«Ալեռտո» ՍՊԸ	172260	206712
3	կրակմարիչների	516600	«Ալեռտո» ՍՊԸ	426000	511200

«Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրության մեջ նվազագույն ջերմաստիճանը ներկայացված է ոչ Ցելսիուսի սանդղակով (°C):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **<u>Հանձնաժողովի որոշման մասին</u>**

<u>Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.</u>

ա) Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Ալեռտո» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Շիրազ Առաքելյան

անդամներ՝ _____ Մագդա Կարապետյան

_____ Լենա Միրզախանյան

քարտուղար՝

_____ Ազնիվ Քոթանջյան